հիմամբ), «Արդ՝ այսպէս եղև զրաւ կենաց Լաւասափ թագաւորին» (էջ 144), «...ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս ամէն» (էջ 146), «Արդ՝ այս Աղամիր անուն այրս...» (էջ 179), «Արդ՝ օրհնեալ է Աստուած յամենայն ժամ» (էջ 181), «Արդ՝ Աջն սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, այսպիսի պատճառաւ և կերպիւ գնաց ի Սպահան» (էջ 190), «Արդ՝ եթէ այնպէս և թէ այսպէս...» (էջ 197), «Արդ զրաւ կենաց Սահակ կաթուղիկոսին և Պօղոս վարդապետին այսպէս եղև, որոց ողորմեալ Տէրն Քրիստոս ներումն արասցէ նոցա՝ անբաւ մարդասիրութեամբն իւրով. ամէն» (էջ 214), և այլն:

Ավարտաբանության բառ-ցուցիչները միշտ չէ, որ պարտադիր են: Այն կարող է լինել զուտ բովանդակային-ասելիքային, ինչպես՝ «Զի յազգէն Հայոց՝ որքան ղարիպականք կան յասացեալ գաւառս, յայս ժամանակիս և յայս պատճառէս են գնացեալ» (էջ 109), «Եւ այս ևս այսպէս» (էջ 180), «Արդ՝ այսոքիկ այսպէս» (էջ 350) և այլն:

Ե՛վ գրական, և՛ պատմագիտական առումով կարևոր է այնպիսի միավորի գոյությունն ու կիրառությունը, ինչպիսին ***պատմության բուն ընթացքը վերականգնող հնարք, դարձ*** միավորն է: Դա վկայությունն է այն բանի, որ Դավրիժեցին չափազանց հստակ է պատկերացրել իր պատմագրքի կառուցվածքը և նույնիսկ փորձել է դիմել կառուցվածքային խաղարկումների, ինչը, ցավոք, ամբողջապես այդպես էլ նրան չի հաջողվել: Ձգտելով ներկայացնել իրադարձությունների ամբողջական համապատկեր, Դավրիժեցին, Աբրահամ Զամինյանի դիտողությամբ՝ «երբեմն ալ միջանկյալ ծանոթություններ կավելցնե, որ պատմության թելը կը խզեն»[21], թեպետ դրանք այսպես թե այնպես առնչվում են նկարագրվող դեպքերին և լրացուցիչ փաստարկումներ են երևանում:

---

[21] ***Աբրահամ Զամինյան,*** Հայ գրականության պատմություն, Ա մաս, Նոր Նախիջևան, 1914, էջ 240: